

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ԱՆԱՊԱՏ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Ս. Կիրակոսի Անապատը կը գտնուէր Եկեղեցաց գաւառին մէջ, Բթնի լեռան ստորոտը: Եկեղեցին նախընտրած էր Ս. Կիրակոսի անունին. — Խաչիկեան, Յիշատ. Ժ. Դարի, էջ 28, 296:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ս. Կիրակոսի Անապատը պատմական տեսակէտէ չունի աններեհ հանգամանք: Վանահայրերուն անուններն իսկ չեն պահուած, բացի մէկ երկուքէն, որոնք են.

1. — Ասեփանոս եպիսկոպոս, 1298-1304. — Ժ. Դարու սկիզբը Ս. Կիրակոսի Ուխտին միաբան եղբայրներն էին Աւետիք, Մխիթար, Դաւիթ, Կարապետ, Կոստանդին, և Ստեփանոս. — Յիշատ. Ժ. Դարի, էջ 29: Բ. Քիւրտեան, Երիզա, 1953, էջ 149:

2. — Աւետիք Բաբուկապետ, 1443-4. — Իր աշակերտներէն ծանօթ է զրիչ տէր Խաչատուր Արեղան. — Յիշատ. Ժ. Դարի, Ա. Մասն, էջ 556, 577:

3. — Յովնանեկ Վարդապետ, 1446. — Յիշատ. Ժ. Դարի, Ա. Մասն, էջ 601:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Մշակութային կեանքը Հափաւոր ծաղկում մը կը ցուցադրէ Ժ. Դարուն, յատկապէս զրշագրական տեսակէտէ: Մանօթ են հետեւեալները.

Ա. — Աւետիք Արեղայ, Գրիչ, Բրդի Վասիլի, 1304ին օրինակած է Աւետարան մը. — Յիշատ. Ժ. Դարի, Բ. 35:

Բ. — Ներսէս Սրբ. Կելընցի, Գրագիր, 1314-39, օրինակած է,

1. — Աւետարան, 1314ին, Յովհաննէս Արքայեղբոր ընտիր օրինակէն, Մխիթար Քահանայի համար. — Յիշատ. Ժ. Դարի, Բ. 251:

2. — Աւետարան, 1325ին, Թիւախոր-ձէնցի Մելիքշահի համար. — Երիզա, էջ 279:

3. — Ժողովածոյ, 1332ին, Յովհաննէս

Վարդապետի խնդրանքով. — Աղանց, Արուստ Դիւնիսեայ Քերականի, 1915, էջ XXV:

4. — Աւետարան, 1335ին, Թիւախոր-ձէնցի Մելիքշահի պատուէրով. — Յիշատ. Ժ. Դարի, Բ. 339:

5. — Մանուսմունք, 1339ին. — Յիշատ. Ժ. Դարի, Բ. 393:

Գ. — Յովհաննէս Երկայն, Գրիչ, 1329-31. — Օրինակած է 1331ին մէկ ձեռնոց, Բարսեղ միայնակեացի համար. — Երիզա, էջ 281:

Դ. — Յակոբ Քահանայ, Գրիչ, 1332ին օրինակած է մէկ Աւետարան, Դեղնաքարցի Ղազարի պատուէրով. — Յիշատ. Ժ. Դարի, Բ. 311:

Ե. — Ազարիա Արեղայ, Գրիչ, 1351ին, իր եղբոր Հայրապետ Երէցի օտարումով, աւարտած է օրինակութիւնը Աւետարանի մը, որուն սկիզբի մասերը զրււած էին Սիմէոն անունով քահանայի մը կողմէ. — Յիշատ. Ժ. Դարի, Բ. 468:

Զ. — Անանիա Գրիչ, 1364ին օրինակած է մէկ Ժողովածոյ, Նորագէտ քահանայի համար. — Յիշատ. Ժ. Դարի, Բ. 564:

Է. — Սարգիս Գրիչ, 1443-6, աշակերտ տէր Խաչատուրի. օրինակած է,

1. — Մեկնութիւն Մատթեոսի, Գրիգոր Տաթևացիի, 1443ին, օժանդակութեամբ իր ուսուցչին. — Յիշատ. Ժ. Դարի, Ա. Մասն, Բ. 630:

2. — Յայմատուրք, 1446ին, զօրծակցութեամբ քանի մը արեղաներու և սարկաւազներու, Ներսէս քահանայի համար: Նկարող՝ Սամուէլ Վարդապետ. — Յիշատ. Ժ. Դարի Ա. Մասն, Բ. 678:

Ը. — Խաչատուր Արեղայ, Գրիչ, 1443-6. — Օրինակած է 1444ին մէկ Լուծմունք Պարապմանց Գրիչ, Գրիգոր Տաթևացիի, իր Վարժապետին Աւետիք հետադարձ օրինակէն. — Յիշատ. Ժ. Դարի, Ա. Մասն, Բ. 651:

Թ. — Պետրոս Արք. Թոխաքցի, 1596ին օրինակած է մէկ Սալմուսեան. — Հանդ. Ամս., 1896, էջ 241:

Ն. ԵՊՍ. ԵՐԱՎԱՆ